# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմիմպորտս ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | Դեկոր | Դեկոր | Դեկոր | Կոնվեկտորային էլեկտրական տաքացուցիչը նախատեսված է բնակարանների, գրասենյակների, հասարակական և այլ տարածքների ջեռուցման համար: Աշխատում է X-աձև ալյումինե ջեռուցող էլեմենտով, որն ապահովում է սենյակի արագ և հավասարաչափ տաքացում մինչև սահմանված ջերմաստիճանը: Տաքացվող մակերեսը՝ 25–30 մ²: Կոնվեկտորային էլեկտրական տաքացուցիչը պետք է ունենա՝ • Օդի և թթվածնի պահպանություն՝ չի չորացնում օդը և չի այրում թթվածինը: • Երկու ջեռուցման ռեժիմ՝ 1000 Վտ և 2000 Վտ, ինչը հնարավորություն է տալիս օգտագործել սարքը որպես հիմնական կամ լրացուցիչ ջերմության աղբյուր: • Ավտոմատ աշխատանք՝ ներկառուցված տերմոստատը պահպանում է սահմանված ջերմաստիճանը: • Հրդեհային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | անվտանգություն՝ սարքը ավտոմատ անջատվում է կողաշրջման կամ գերտաքացման դեպքում: • Օգտագործողի պաշտպանություն՝ կորպուսի մակերեսը չի տաքանում 55–60°C-ից բարձր, ինչը նվազեցնում է այրվածքների վտանգը և թույլ է տալիս տեղադրել տարբեր մակերևույթների վրա (լինոլեում, լամինատ, գիպսաստվարաթուղթ, փայտ և այլն): • Անվտանգ կառուցվածք՝ կլորացված եզրերը պարտադիր են: • Հարմարավետ շահագործում՝ օդի հետ շփման մեծացված մակերես, չի առաջացնում տհաճ հոտեր: Կառավարման վահանակը պարզ և մատչելի է: • Արագ տեղադրում՝ նախատեսված է ինչպես պատին, այնպես էլ հատակին տեղադրելու համար: Երաշխիքային սպասարկում • Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 1 (մեկ) տարի, որի ընթացքում արտադրական թերությունների ի հայտ գալու դեպքում մատակարարը պարտավորվում է ապահովել անվճար երաշխիքային սպասարկում: Կոմպլեկտ • Էլեկտրական տաքացուցիչ – 1 հատ • Հենակներ – 2 հատ • Պատի ամրացման հարմարանք – 1 հատ • Ամրացման կոմպլեկտ – 1 հատ • Օգտագործման ձեռնարկ – 1 հատ • Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: • Ապրանքի փոխադրումը՝ ըստ հասցեի և անհրաժեշտ քանակի, իրականացվում է մատակարարի կողմից: • Մատակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում են Պատվիրատուի կողմից՝ նախնական պատվերի միջոցով՝ էլեկտրոնային փոստով կամ հեռախոսազանգով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Армимпортс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 9 | | | | |